

Culture & Creativity

EU-Eastern Partnership Programme



ՄՇԱԿՈՒՅԹԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ ՏԱՐԱԾԱՇՐՋԱՆԱՅԻՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ և ՔԱՂԱՔԱՇԻՆՈՒԹՅԱՆ ՎՐԱ

Մշակութային ժառանգությունը
որպես քաղաքի ձևավորման,
մշակութային կոթողների պահպանման
ենթակառուցվածքի զարգացման
և կապիտալացման գործիք



Ծրագիրը ֆինանսավորվում է եվրամիության կողմից

Նախարան

Զնայած մշակութային ժառանգությունը մեզ է հասել անցյալից, այն ողջ աշխարհում միշտ եղել է կարևոր ու արդիական ռեսուրս: Որպես ազգային ինքնության կարևոր բաղադրիչ՝ այն մարդկանց կապում է անցյալին՝ լինելով մշակութային հիշողությունների և գիտելիքի աղբյուր՝ նպաստելով ավելի լավ, ներառական ու հանդուրժող հասարակությունների կայացմանը: Լինելով միջտարածքային և միջազգային երկխոսության էական մի մաս՝ մշակութային ժառանգությունը կարող է ստեղծել բազմաթիվ և հակասող հիշողությունների ու պատումների ուսումնասիրության ու որդեգրման հարթակ: Այն ցկյանս կրթության և քաղաքացիների ներգրավման հիմքն է:

Մշակութային ժառանգությունը համարվում է կարևոր տնտեսական արժեք և երկրի տարածաշրջանային տնտեսության հիմնական խթան: Իրականում այն առաջին մշակութային ոլորտն էր, որ տնտեսապես կարևոր համարվեց: Դեռևս 1970-ական թվականներին թե ՄԱԿ-ի զարգացման ծրագիրը, թե համաաշխարհային բանկը ներդրումներ էին կատարում պատմական արժեք ունեցող կոթողների պահպանման ոլորտում՝ զուտ տնտեսական դրդապատճառներից ելնելով: 1980-ականների վերջին արդեն արդիական էր խոսել մշակութային ժառանգության արդյունաբերության մասին, որը գործում ու զարգանում էր զբոսաշրջությանը առընթեր: Այսօր բազում երկրներ, տարածաշրջաններ և քաղաքներ ընդունում են մշակութային և զբոսաշրջության հատվածների միջև առկա կապը և հաճախ այդ երկուսը միավորում են մեկ բաժնում կամ նախարարությունում: Մշակութային զբոսաշրջությունը ցույց է տալիս կայուն աճ տասնամյակների ընթացքում և աստիճանաբար դառնում է երկրի և տարածաշրջանային զարգացմանը նպաստող գործոններից մեկը:

Ուշագրավ է, որ զբոսաշրջության արագ զարգացումը կարող է խոչընդոտել քաղաքների էկոհամակարգի զարգացմանը: Դրա հետ մեկտեղ, շոշափելի և անշոշափելի ժառանգության կոթողների կայուն կառավարումը քաղաքներին ընձեռում է աճի բազմազան և տարաբնույթ հնարավորություններ: Պատմական վայրերի վերականգնման և մշակութային ժառանգության կոթողների պահպանման գործընթացից բխող տնտեսական օգուտներն են երկրի արտադրության խթանումը, աշխատատեղերի ստեղծումը, ինչպես նաև մշակութային ժառանգության կոթողների հանրաճանաչումը, քանի որ մշակութային ժառանգությունը ավելի գրավիչ է դարձնում քաղաքները և նպաստում վերջիններիս դիրքի և կերպարի ձևավորմանը:

Կարևոր է մշակութային ժառանգության դերը նաև քաղաքացիներին իրազեկելու և քաղաքի զարգացման գործընթացում ներգրավելու գործում: Նման կերպ կառավարական մարմինների և մասնավոր գործիչների համագործակցությունը կայունություն և վստահություն է ձեռք բերում:

Մշակութային ժառանգության հանրաճանաչումը և արժևորումը կարող է էական նշանակություն ունենալ այնպիսի ոլորտների վերականգնման գործում, որտեղ մեծ է ապարդյունաբերականացման վտանգը. չէ որ մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների ակունքում ընկած է հենց մշակութային արդյունաբերությունը մշակութային գործիչների հետ մեկտեղ: Եվրոպայի հարուստ և բազմազան ժառանգությունը մեծ ներուժ ունի ավելի քիչ հայտնի նպատակավայրերի հանրաճանաչման, ինչպես նաև կայուն մշակութային զբոսաշրջության զարգացման գործում:

Փաստեր և թվեր

- Համաձայն համաշխարհային զբոսաշրջության կազմակերպության՝ վերջին վեց տասնամյակի ընթացքում զբոսաշրջությունը շարունակական աճ և բազմազանեցում է ապրել՝ դառնալով աշխարհի ամենամեծ և ամենաարագ աճող տնտեսական հատվածներից մեկը: Միջազգային զբոսաշրջիկների թիվը աճել է 25 մլն-ից մինչև 277 մլն 1950-1980 թթ. ընկած ժամանակահատվածում, 438-ից մինչև 684 մլն 1990-2000 թվականներին և, վերջապես, դարձել է 922 մլն 2008 թվականին: Ակնկալվում է, որ մինչև 2020 թվականը միջազգային այցելուների թիվը կհասնի 1.6 միլիարդի: Աճը, հատկապես նկատելի է այսպես կոչված զարգացող տարածաշրջաններում, որի արդյունքում զարգացող երկրների միջազգային այցելուների թիվը կայուն աճել է 1990 թվականին գրանցված 31 տոկոսից մինչև 45 տոկոս 2008 թվականին: Միջազգային այցելուների ծախսերը աճել են 1.7 տոկոսով (944 մլրդ դոլար)՝ 2008 թվականին:
- Եվրոպան հիմնական մշակութային նպատակավայր է, որտեղ տեղակայված են բազմաթիվ հիմնական մշակութային վայրեր, և ուր այցելում են մշակույթով հետաքրքրվող բնիկ և միջազգային զբոսաշրջիկներ: Հաշվարկները ցույց են տալիս, որ մշակութային տուրիզմը կազմում է եվրոպայում ողջ զբոսաշրջության 40 տոկոսը /այստեղ են ընդգրկված թե ընդհանուր, թե որոշակի նպատակներ հետապնդող զբոսաշրջիկները/:
- ԵՄ վիճակագրական տվյալների համաձայն՝ զբոսաշրջիկների կողմից սիրված վայրերից են Փարիզը, Բեռլինը, Հոնոլուլու, Բարսելոնան և Պրահան: Այս քաղաքների ինքնությունը կառուցված է շոշափելի և անշոշափելի մշակութային ժառանգության կոթողների շուրջ:
- Փրայսուոթեր Հաուսկուպերսը 2013 թվականին եվրոպական հանգույցների դիտարանի կողմից հրատարակված ստեղծարար արդյունաբերությունների մասին զեկույցում նշել է, որ հանրային հաստատությունների սեփականությունը հանդիսացող մշակութային ժառանգությունը ստեղծարար տնտեսության հիմնական արժեքներից է և պետք է որպես այդպիսին ճանաչվի կառավարական մարմինների կողմից: Զեկույցի համաձայն՝ մշակութային ժառանգությունը մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների և ստեղծարար խմբերի զարգացման հիմքն է:
- Մշակույթը և մշակութային ու ստեղծարար արդյունաբերությունները, լինելով մշակութահեն քաղաքաշինության ռազմավարության կարևոր բաղադրիչ, ուղղակիորեն ազդում են քաղաքի անշարժ գույքի վրա: Այս ազդեցությունը կարող է լինել թե հսկայական հիմնարար նախագծերի արդյունք, ինչպիսին, օրինակ, ժառանգության կոթողների վերականգնման կամ ստեղծարար խմբավորման նախագիծն է, կամ ավելի փոքր ստեղծարար միկրո-բիզնեսի կամ փոքրամասշտաբ մշակութային միջոցառման հետևանք:

Օրինակ առաջին

Բավարիայի Ռեգենսբուրգ քաղաքը զարգանում է յուրահատուկ միջնադարյան մի քաղաքի հատվածի շուրջ, որը 2006 թվականին ընդգրկվեց ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոթողների ցանկում՝ «Ռեգենսբուրգի հին քաղաք» անվան տակ: Քաղաքը փորձել է առավելագույնս օգուտ քաղել իր յուրահատուկ մշակութային ժառանգությունից և ներդրումներ է կատարել հին քաղաքի վերականգնման ու պահպանման գործում սկսած 1960-ականներից: 2006 թվականից սկսած քաղաքի ուշադրության կենտրոնում է եղել մշակութային ժառանգություն ներկայացնող այս վայրի պահպանումն ու պատշաճ շահագործումը:

Կառավարման հիմնական գործիքներից մեկը համաշխարհային ժառանգության կառավարման ծրագիրն է, որը նկարագրում է, թե ինչպես պետք է պահպանել համաշխարհային ժառանգության կոթողները համաձայն 2007 թվականի ՅՈՒՆԵՍԿՕ-ի մրցանակին ընդառաջ պաշտոնապես մշակված ցուցիչների: Համաշխարհային ժառանգության կառավարման ծրագիրը նմուշ է այն քաղաքների և տարածաշրջանների համար, որոնք կառավարում են մեծ մասշտաբի ժառանգության վայրեր:

Նորարար և ներառական մոտեցումների կիրառմամբ քաղաքապետարանի թիմը նույնպես իր ներդրումն ունեցավ ներկա ծրագրի մշակման գործում՝ սերտորեն համագործակցելով փորձագետների և քաղաքացիների հետ: Շահագրգիռ կողմերը հիմնեցին «տեղի աջակցության խումբ», որն այնուհետև բաժանվեց մի քանի մասի՝ ծրագրի որոշակի կետերի վրա աշխատելու նպատակով:

Ռեգենսբուրգի հիմնական պարտավորվածությունը ծրագրի իրականացումն է, իսկ աջակցող խումբը ղեկավարում է ողջ գործընթացը:



- Համաշխարհային ժառանգության տարածքի մեծությունը ավելի քան 182 հեկտար է, և այնտեղ են տեղակայված 984 պատմական շինություն: Տարածքը շրջափակված է ավելի քան 775 հեկտար բուֆերային գոտով՝ հատուկ ծրագրավորված քաղաքային տարածքի կանոնակարգին համաձայն:

Համաշխարհային ժառանգության կառավարման ծրագրի առաջնահերթությունները հետևյալն են.

1. Պատմական հարտարապետական ժառանգության կոթողների արտաքին և ներքին պահպանում և արդիական գործառույթների հարմարեցում:
 2. Վայրի բազմաֆունկցիոնալության պահպանում՝ բնակարանային, աշխատանքային, հանգստի, սննդի, առևտրի, զբոսաշրջության նպատակներով: Խիտ և սահմանափակ տարածքը տարաբնույթ գործառույթների ծառայեցնելը կարող է հանգեցնել շահագործման և առևտրային շահերի բախման, որին էլ իր հերթին կարող է վտանգել քաղաքի բազմաֆունկցիոնալ բնույթը:
 3. Բնական աղետներին և վտանգներին պատրաստվածություն / ջրհեղեղներ, օդի աղտոտվածություն, կլիմայի փոփոխություն/:
- Համաշխարհային ժառանգության կառավարման ծրագիրը սահմանել է գործողությունների ութ ոլորտ և ներկայացրել յուրաքանչյուր ոլորտին հարիր հստակ լուծումներ.
1. Հանրային և մասնավոր ներդրումների միջոցով մշակութային ժառանգության աջակցությանը կհատկացվեն հատուկ դրամական միջոցներ և հարտարապետական մրցանակներ:
 2. Երկրի մշակութային առաջարկի ռազմավարական նպատակն է կատարելագործել զբոսաշրջիկների այցը տվյալ մշակութային վայրում:



3. Տնտեսական զարգացումը հանաչում է գտնում ստարտափներին աջակցող ծրագիր իրականացնելով, ինչպես նաև դատարկ մանրածախ առևտրի տարածքները սահմանափակելով:
 4. Նոր նախագծերի արդյունքում զարգանում են բնակարանային պայմանները, ինչպես նաև հասարակության բազմազանությունը, և բարելավվում է կյանքի որակը:
 5. Քաղաքում հիմնականում երթևեկում են հեծանիվերի կամ հասարակական տրանսպորտի միջոցով:
 6. Բոլոր քաղաքաշինական փաստաթղթերում հիմնավորվում են Հին Քաղաքի առանձնահատկությունները:
 7. Պատմական կառույցների պահպանման գործում հաշվի են առնվում բնապահպանական խնդիրները:
 8. Մշակվում է հանրությանը իրազեկելու և հետազոտություններ կատարելու ծրագիր:
- Մշակվեց նաև մշակութային ժառանգության կոթողների համար նախատեսված հարկային թեթևացումների ծրագիրը, որի հիմնական նպատակը մասնավոր ներդրողներ գտնելն է:
 - Համաձայն հաշվարկների՝ Հին քաղաքի ազդեցությանը տեղի մանրածախ առևտրի վրա դրական է եղել, և քաղաքի 1400 խանութի համախառն տարեկան շրջանառությունը կազմել է 1.3 միլիարդ եվրո:
 - Ավելի քան 300 000 այց է գրանցվել 2011 թվականին:



Օրինակ երկրորդ

1993 թվականին Իսպանիայի Մերիդա համայնքը ճանաչվել է ՅՈՒՆԵՍԿՕ-ի համաշխարհային ժառանգության կոթող: Մերիդան Իսպանիայի էկստրեմադուրա մարզի մայրաքաղաքն է, որը հարուստ է հռոմեական շրջանին թվագրվող հուշարձաններով: Քաղաքի համար նախագծված հատուկ պահպանման ծրագիրը սերտ կապ է հաստատում ժառանգության պահպանման և քաղաքաշինության միջև՝ նպատակ հետապնդելով համատեղել քաղաքաշինությունը հուշարձանների պաշտպանության հետ: Քաղաքում ծավալվող շինարարական ծրագրերի մեծ մասը առնչվում է մշակութային ժառանգության հետազոտությանը, փաստագրմանը և պահպանմանը՝ առկա արժեքավոր տարածքները նոր քաղաքային տարածքներում ինտեգրելու նպատակով:

1986 թվականին ստեղծվեց Մերիդա քաղաքի կոնսորցիում՝ համակարգելու այն հաստատությունների գործունեությունը, որոնք ղեկավարում էին քաղաքի մշակութային ժառանգության կոթողները: Կոնսորցիումի նպատակը Հատուկ պաշտպանության ծրագիր իրականացնելն էր:

Հիմնական խնդիրը՝ առկա սահմանափակ միջոցներով մշակութային ժառանգության բազմաթիվ կոթողների պաշտպանությունը՝ տնտեսական աճ և հասարակական ներգրավվածություն ապահովելու նպատակով: Իրականացված ռազմավարության արդյունքում կոնսորցիումը համագործակցության տարբեր ձևեր հաստատեց՝ ներգրավելով թե քաղաքացիների, թե մասնավոր գործիչ-ներդրողների: Կոնսորցիումի իրականացրած 4 հիմնական նախաձեռնությունները ներկայացված են հաջորդիվ:

1. «Մեկենաս» նախաձեռնությունը բաց է այն ասոցիացիաների, հաստատությունների և ընկերությունների համար, որոնք պատրաստ են հովանավորել մշակութային ժառանգության վայրեր՝ փոխարենը ունենալով այնպիսի առավելություններ, ինչպիսիք են անվճար մուտքը, խանութների կողմից առաջարկվող զեղչերը, հատուկ միջոցառումներին մասնակցելու իրավունքը և այլն:
2. «Դպրոցը հուշարձան է որդեգրում» նախաձեռնությունը թույլ է տալիս, որ դպրոցները դառնան ժառանգության կոթողների պահպանող և գիտելիքի փոխանցող: Այսպիսով՝ դպրոցները հովանավորում են հուշարձաններ, կազմակերպում միջոցառումներ, իսկ փոխարենը ստանում հուշարձանի տարածք մուտք գործելու թույլատրություն:
3. «Heritage Emeritus» նախաձեռնությունը կամավորների ծրագիր է, որի հիմնական նպատակն է հանրայնացնել մշակութային ժառանգության վայրերը և այնտեղ ապահովել այն խմբերի մուտքը, որոնք գտնվում են չքավորության եզրին կամ չեն ընդունվում հասարակության կողմից /գործազուրկ, հիվանդ, անապահով ընտանիքներից և բնակավայրերից և այլն/:
4. «Emerita Lúdica» նախաձեռնությունը հանդես է գալիս պատմական ժամանցային միջոցառումներով՝ Մերիդայի հռոմեական ժառանգությունը հանրայնացնելու նպատակով: Ամեն տարի վայրը մի քանի օրով քաղաք և տարածաշրջան է գրավում այցելուների՝ հռոմեական ժամանակաշրջանը հիշեցնող տեսարաններով և միջոցառումներով, որոնց մասնակցում են թե արվեստագետներ, թե ընկերություններ:



Ի տարբերություն հիմնական մշակութային նախաձեռնությունների, Մերիդայի կոնսորցիումի ֆինանսավորումն ու եկամուտը կազմում են 75 տոկոս և գերազանցում են հանրային ֆինանսավորումը, որն ընդամենը 25 տոկոս է կազմում: 2015 թվականի բյուջեն կազմում էր 3,291,453 եվրո: Մասնավոր ֆինանսավորման աղբյուր էին հանդիսանում հովանավորների ներդրումները «Մեկենաս» և «Emerita Lúdica» նախաձեռնություններում, դպրոցների ներգրավվածությունը «Դպրոցը հուշարձան է որդեգրում» ծրագրում և մոտափ վճարները: 2015 թվականի համար կոնսորցիումն ակնկալում էր, որ եկամտի 68 տոկոսը կգա մոտափ վճարներից, 16 տոկոսը՝ հանրային հաստատություններից, 9 տոկոսը՝ վարձակալությունից և վաճառքից, իսկ 7 տոկոսը՝ հովանավորներից: Եթե համեմատենք 2014 թվականի բյուջեի հետ, կտեսնենք, որ Մերիդայի քաղաքապետարանը հատկացրել էր 537,300 եվրո մշակութային ծրագրերին:


- «Մեկենաս» ծրագիրը ներգրավեց մոտ 1,500-2,000 գործարարների և բիզնեսների, որոնք ցանկություն հայտնեցին այն հովանավորելու: 2014-2015 թթ. ընկած ժամանակահատվածում կոնսորցիումի բյուջեն բարձրացավ 6.8 տոկոսով՝ մասնավոր ներդրումների շնորհիվ:
- «Emerita Lúdica» նախաձեռնությունը գրավեց ավելի քան 30,000 մարդու և 400 կամավորի շորրորդ և հինգերորդ փուլերում:
- Տարվա ընթացքում ավելի քան 500 000 մարդ այցելեց Մերիդա:

Այցելուների 12 տոկոսը օտարերկրացի էին:

Կոնսորցիումին հաջողվեց կայուն կապեր հաստատել տեղի խմբերի և բիզնեսների հետ և հասնել դրան, որ նրանք ներգրավվեն գործընթացում, մասնակցեն և կիսեն պարտականություններ: Կրթական հարթությունը երաշխավորել է մշակութային ժառանգության երկարաժամկետ արժևորում, իսկ զբոսաշրջիկներ

գրավելու նպատակով հնագիտական վայրերի գործածումը արդեն իսկ խոսում է մշակութային ժառանգության կայունության մասին: «Մեկենաս» նախաձեռնությունը նպաստեց հուշարձանների պահպանման երկարաժամկետ կայուն ֆինանսավորմանը:

Կոնսորցիումի՝ մշակութային ժառանգության հանրայնացումը հաջողվել է և խրախուսել է տարածաշրջանային կառավարական մարմիններին այն կիրառել էկստրեմադուրայի այլ ֆաղափներում:



Արդյունքներ և ազդեցություն

- Վերջին հետազոտությունները ցույց են տալիս, որ անցում է կատարվել մշակութային վայրերի վրա հիմնված զբոսաշրջությունից դեպի քաղաքներ, որտեղ կազմակերպվում են մշակութային արժեքներով և ստեղծարարությամբ համեմված միջոցառումներ, ինչպիսին, օրինակ, փառատոներն են: Մշակութային ժառանգության վայրերը հարթակ են դառնում ավելի լայնածավալ մշակութային և կրթական միջոցառումների համար, որոնք նույնպես խոստումնալից են կայունության առումով:
- Մշակութային ժառանգության վայրերի վերականգնումն ու պահպանումը ուժեղ խթան է երկրի տնտեսության զարգացման, փոքր և միջին ձեռնարկությունների աճի, ժամանցի և զբոսաշրջության ոլորտներում, ինչպես նաև ստեղծարարության հատվածներում աշխատատեղերի ստեղծման գործում: Նույն տրամաբանությամբ երկրի փոքր և միջին ձեռնարկությունները կարող են իրենց աշակցությունը ցույց տալ մշակութային ժառանգության կոթողներին և հովանավորել դրանք:
- Մշակութային ժառանգության հուշարձանների վերականգնումը ենթադրում է, որ դրանք անհրաժեշտ է հարմարեցնել արդիական պահանջներին՝ ստեղծելով բնակարանային պայմաններ, առևտրի կետեր, ստեղծարար հանգույցներ և անելով ամեն ինչ, որ հուշարձանները դառնան քաղաքի ամենօրյա կյանքի մի մասը՝ այսպիսով՝ նպաստելով ծրագրի կայունությանը:
- Զբոսաշրջության շարունակական ընդլայնումը կարող է վտանգել բնապահպանական եւ սոցիալական պայմանները: Այն կարող է խթանել էլիտար առեւտուրն ու ոչնչացնել տեղական տնտեսությունն ու համայնքները: Ակտիվ քաղաքացիների ներգրավումը, ինչպես նաև քաղաքացիների տարբեր խմբերի, տեղական բիզնեսների, կրթական և մշակութային հաստատությունների միջև համակարգված համագործակցությունը ծրագրի իրականացման, ինչպես նաև հուշարձանների վերականգնման և պաշտպանության բոլոր փուլերում կարող է հանգեցնել քաղաքի ավելի կայուն զարգացմանը:
- Մշակութային ժառանգությանն առնչվող կրթական միջոցառումները և ծրագրերը երաշխավորում են ցկյանս կրթություն և զանազան քաղաքացիական խմբերի, հատկապես՝ երիտասարդների պարտականությունների համատեղում:
- Պատմական, մշակութային և գեղարվեստական ժառանգությունը զանազան մեխանիզմների օգնությամբ պարարտ հող է ստեղծում ստեղծարար արդյունաբերությունների համար: Որպես կանոն, ստեղծարար արդյունաբերությունները հիմնվում են հարուստ և տարաբնույթ մշակութային ժառանգության, հմուտ արվեստագետների և այլ ստեղծարար գործիչների վրա, ինչպես նաև ապավինում են տարաբնույթ ձեռնարկատիրական և նորարար ծառայությունների արդյունավետ փոխազդեցությանը՝ շուկայում ստեղծարարության հասնելու նպատակով:

Հանձնարարականներ

- Մշակութային ժառանգությունը ստեղծարար տնտեսության հիմնական արժեքն է: Անհրաժեշտ է, որ այն ճանաչվի տեղի, տարածաշրջանային և ազգային կառավարման մարմինների կողմից:
- Մշակութային ժառանգությունը, որպես ստեղծարար տնտեսության մի մաս, հիմնականում արմատացած է այն երկրում, որտեղ էլ առաջացել է: Ներկայիս ապակենտրոնացման և տարածաշրջանների հզորացման միտումների հետ մեկտեղ այն մրցակցային առավելություն է ընձեռում համապատասխան քաղաքներին և տարածաշրջաններին: Քաղաքի կամ տարածաշրջանի կառավարման մարմինների համատեղ ջանքերը, ինչպես նաև մասնավոր հատվածի և քաղաքացիական հասարակության հետ նրանց համագործակցությունը հանգեցնում է արդյունավետ ռազմավարությունների մշակմանը:
- Թեև շոշափելի մշակութային ժառանգությունը կարևոր արժեք է, այն կարող է լուրջ մարտահրավեր նետել տարածաշրջանային կամ քաղաքային ռեսուրսներին: Փորձը ցույց է տալիս, որ լավ մշակված կառավարման ծրագիրը արժեքավոր գործիք է, որը թույլ է տալիս սահմանել հասանելի նպատակներ, կառավարել ռեսուրսները, մեծ խնդիրներից ստանալ փոքր կատարելի առաջադրանքներ, կիրառել մշտադիտարկում և ներգրավել քաղաքաշինության ու ժառանգության ոլորտներում գործող արհեստավարժների, ինչպես նաև քաղաքացիների ու անմիջական շահագրգիռ կողմերի /բնակիչներ, խանութպաններ և այլն/:
- Տեղի գործիչների ներգրավումը /քաղաքացիներ, ՓՄՁ և այլն/ մշակութային ժառանգության վերականգնման եւ պաշտպանության աշխատանքներում կարևոր է մշակութային ժառանգության վայրերի, քաղաքների կամ մարզերի համար: Այն թույլ է տալիս սահմանել և իրականացնել երկարաժամկետ նպատակներ, կիսել պարտականությունները, ընդլայնել ռեսուրսների բազան, տարբեր խմբերի քաղաքացիների, ինչպես նաև քաղաքացիների եւ կառավարության միջև երկխոսության հարթակ ստեղծել: Քաղաքացիների տարբեր խմբեր կարող են փոքր առաջադրանքներ կատարել կառավարման ծրագրի շրջանակներում՝ ծրագիրն ավելի իրատեսական և իրագործելի դարձնելու նպատակով: Քաղաքացիների ներգրավվածությունն օգնում է ապահովագրվել զբոսաշրջության արդյունաբերության բացթողումներից:
- Թափանցիկությունը, ընթացիկ խորհրդակցությունները, համագործակցությունը և բաց քննարկումները հաջողության բանալին են:
- Մշակութային ժառանգությունը կարող է դառնալ ՄՍԱ և ստեղծարար խմբերի զարգացման հիմքը: Մշակութային ժառանգության վերականգնումն ու արժեքորումը կարող են նպաստել հեռավոր և խոցելի տարածքների /նախկին արդյունաբերական վայրեր, բնակավայրեր, որոնք զբոսաշրջիկների ավանդական երթուղիներից հեռու են տեղակայված/:
- Մշակութային և ստեղծարար արդյունաբերությունների աշխատանքը մշակութային ժառանգության վայրերում նպաստում է նշված արդյունաբերությունների կայունությունը հուզական և ֆինանսական պարտականությունների համատեղ կատարման, զբոսաշրջիկների այցի

կատարելագործման միջոցով: Այս ամենը դարձնում է ստեղծարար արդյունաբերությունները արդի մշակույթի ոլորտի անքակտելի մի մասը:

- Տարաբնույթ ֆինանսական խթանները /այդ թվում՝ հարկային թեթևացումները, վարկային ծրագրերը, վարձակալման հատուկ պայմանները և այլն/ կարող են օգտակար լինել շահագրգիռ կողմերին՝ բնիկներին, ՓՄՁ-ներին, ստեղծարար խմբերին և հանգույցներին, ինչպես նաև ծրագրի հովանավորներին ու համակիրներին:



Հավելյալ տեղեկատվություն

ՅՈՒՆԵՍԿՕ-ի Ստեղծարար տնտեսության զեկույց, 2013:

<http://www.unesco.org/culture/pdf/creative-economy-report-2013.pdf>

Եվրոպական հանգույցների դիտարան. Ստեղծարար արդյունաբերություններ. արդյունաբերությանը բնորոշ պայմանների վերլուծություն՝ համաշխարհային մակարդակի հանգույցների զարգացման համար, 2013:

http://www.emergingindustries.eu/Upload/CMS/Docs/Creative_industries_FCs.pdf

Զարլզ Լենդրի «Ստեղծարարության, մշակույթի և քաղաքի փոխադարձ կապը» 2010

https://www.forum-avignon.org/sites/default/files/editeur/ECCE_report.pdf

Քաղաքների և տարածաշրջանների մշակույթը

<http://www.cultureforcitiesandregions.eu>

«Եվրոստատ» ԵՄ վիճակագրական ԵՄ վիճակագրական տվյալներ. քաղաքների, տարածաշրջանների և արվարձանների., ինչպես նաև քաղաքների զբոսաշրջության և մշակութային կյանքի վիճակագրություն:

http://ec.europa.eu/eurostat/statistics-explained/index.php/Urban_Europe_-_statistics_on_cities,_towns_and_suburbs_-_tourism_and_culture_in_cities#Main_statistical_findings

Եվրոպայի Խորհուրդ. Եվրոպայի մշակութային ճանապարհների ազդեցությունը փոքր և միջին ձեռնարկությունների նորարարության և մրցակցության վրա:

https://ec.europa.eu/growth/sectors/tourism/offer/cultural_en

Համաշխարհային զբոսաշրջության կազմակերպություն

<http://unwto.org/facts/menu.html>